

ՄՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՌԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ (1988-1990 թթ.)

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ Ռիֆտերի սանդղակի ավելի քան 9 բալ հզորության ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկեց հանրապետության տարածքի 40 %-ը՝ 1 մլն. 130 հազար բնակչությամբ: Մի քանի բուլվարները և քաղաքային շրջանները լրիվ կամ մասնակիորեն ավերվեցին Լենինական (այժմ Գյումրի), Մայիտակ, Կիրովական (այժմ Վանաձոր) և Ստեփանավան քաղաքները, Մայիտակի, Ստեփանավանի, Ախուրյանի, Գուգարքի, Արագածի, Ամասիայի, Դուկասյանի (այժմ Աշոցք), Կալինինյի (այժմ Տաշիր) շրջաններում գտնվող հարյուրից ավելի գյուղեր ու բնակավայրեր: Պաշտոնական տվյալների համաձայն գոհվեց շուրջ 25 հազար մարդ, 530 հազարը մնաց անօթևան: Ընդհանուր առմամբ Հայաստանը կորցրեց 8 մլն. քառ. մ բնակելի տարածություն, որը կազմում էր ամբողջ բնակֆոնդի 17 %-ը, ավերվեցին կամ վթարային դարձան ավելի քան 240 նախադպրոցական հաստատություններ, 277 դպրոցներ, 250 առողջապահական հիմնարկներ, 324 ակումբներ ու մշակույթի տներ: Երկրաշարժի գոտում լիովին շարքից դուրս եկան ջրամատակարարման, ջերմա և էներգամատակարարման համակարգերը, կենցաղ-սպասարկման, կապի ու տրանսպորտի ծառայությունները: Դադարեցին գործել ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություններ՝ 82 հազար բանվորական տեղերով: Առեղծված վնաս կրեց նաև գյուղատնտեսությունը: Ավերվեցին կամ լրջորեն վնասվեցին վերամշակող արդյունաբերության ավելի քան 80 ձեռնարկություններ, շուրջ 1200 անասնապահական շինություններ: Ոչնչացավ անասունների ու թռչունների մեծ գլխաքանակ: Տարերային աղետն ընդհանուր առմամբ Հայաստանի ժողովրդական տնտեսությանը 13 մլրդ. ռուբլու վնաս հասցրեց<sup>1</sup>:

Աղետի լուրը տարածվեց ամբողջ աշխարհով: Հայաստանի վրա բեռնվեց համայն մարդկության ուշադրությունը: Արդեն իսկ երկրաշարժի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, տեղում իրավիճակին ծանոթանալու, օգնություն կազմակերպելու նպատակով Հայաստան ժամանեց ԽՍՀՎ Կենտկոմի Քաղբյուրոյի հատուկ հանձնաժողովը, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովի ղեկավարությամբ: Հանձնաժողովը, մասնավորապես նրա նախագահ Ն. Ռիժկովը, հոգատարությամբ ու ջանասիրությամբ կազմակերպական մեծ աշխատանք ծավալեց, որի համար հայ ժողովուրդը նրան երախտագիտությամբ է հիշում: Դեկտեմբերի 10-ին ընդհատելով արտասահմանյան իր պաշտոնական այցը՝ աղետի գոտի ժամանեց ԽՍՀՎ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Գորբաչովը, ինչը կարևոր միջազգային նշանակություն ունեցավ: Միութենական կառավարությունն ընդունեց երկրաշարժի հետևանքների վերացմանն ու աղետի գոտու վերականգնմանը նպատակաուղղված մի շարք որոշումներ: Ըստ էության, բացվեցին սահմաններն օտարերկրյա պետություններից օգնություն ստանալու համար:

Ահավոր երկրաշարժն անգամ հայ ժողովրդին հետ չկանգնեցրեց Արցախյան շարժումից: Ժողովրդական զանգվածները, անտեսելով իրենց դժվարին կացությունը, աղետի գոտի ժամանած Մ. Գորբաչովից պահանջում էին արդարացի լուծում տալ Ղարաբաղյան հիմնախնդրին: Սակայն ԽՍՀՎ Կենտկոմի գլխավոր քարտուղարը հայ ժողովրդի օրինական պահանջին ընդառաջելու փոխարեն, հրապարակայնորեն դատապարտեց Արցախյան շարժումը:

Երկրաշարժից անմիջապես հետո հայ ժողովրդին օգնություն ցույց տալու նպատակով Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղազախստանից և ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետություններից ու մարզերից Հայաստան եկան հազարավոր փրկարարներ, բժիշկներ, շինարարներ և այլ մասնագետներ: Նրանք իրենց հետ բերում էին դեղորայք, բժշկական սարքավորումներ, շինարարական տեխնիկա, վրաններ, սննդամթերք և այլն: 1989 թ. աղետի գոտում աշխատում էին Միության տարբեր

<sup>1</sup> Տե՛ս «Коммунист», 18 հունվարի, 1989.

տարածաշրջաններից եկած ավելի քան 40 հազար մասնագետներ, զինծառայողներ<sup>2</sup>: Հանրապետության տուժած շրջանները բաժանվել էին գոտիների, որոնցից յուրաքանչյուրին կցված էին միութենական հանրապետություններ ու կազմակերպություններ: Երկրաշարժի հետևանքները վերացնելու աշխատանքներն ընթանում էին եռանդով ու մեծ ծավալներով: Աղետի գոտուց շուրջ 170 հազար մարդ էվակուացվեց և հանգրվան գտավ Կովկասի ծովափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասում և երկրի այլ վայրերում<sup>3</sup>: Հազարավոր խեղված երեխաներ, պատանիներ ու աղջիկներ բուժման նպատակով ուղարկվեցին ԽՍՀՄ և արտասահմանյան տարբեր քաղաքներ:

Ղեկի Հայաստան էին ուղևորվում նաև տարբեր երկրների օդանավեր, զնացքներ և ավտոշարասյուններ: Օդային ուղերթով աշխարհի տարբեր մասերից արյուն և դեղորայք առաքվեցին Հայաստան: Համակողմանի այդ օգնությանը մասնակցում էին աշխարհի ավելի քան 113 երկրներ և 7 միջազգային կազմակերպություններ: Աղետի գոտում հայերի, ռուսների, վրացիների, ուկրաինացիների, դազախների, լիտվացիների և միության այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ աշխատում էին ամերիկացիներ, անգլիացիներ, իտալացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ, չեխեր, լեհեր, նորվեգացիներ, ավստրիացիներ, շվեդներ, արաբներ, հարավսլավացիներ և ուրիշներ, ընդհանուր առմամբ շուրջ 2 հազար արտասահմանցի մասնագետ: Նրանք փլատակների տակից հանեցին ավելի քան 40 հազար մարդու, փրկեցին 16 հազար կյանք<sup>4</sup>: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իրեն օգնության շտապող հարավսլավացի 7 օդաչուներին, որոնք օդային աղետի հետևանքով 1989թ. դեկտեմբերի 12-ին զոհվեցին Երևանի մատույցներում: Չի մոռանա նաև Գյումրիի մոտակայքում նույն կերպ զոհված խորհրդային զինծառայողներին: Մեր ժողովուրդը խորապես զգացվեց, երբ նրա վիշտը մարդկայնորեն կիսելու և ցավակցություն հայտնելու համար, իրենց հետ օգնություն բերելով, երկրաշարժի գոտի ժամանեցին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի (ավագի) որդին (ներկայիս նախագահի եղբայրը) և թոռը:

Մայր հայրենիքին օգնության ձեռք մեկնեց նաև սփյուռքահայությունը: Նա այդ ծանր օրերին համայնքով և դարձավ մեկ բռունցք: Մեր հայրենակիցները ստեղծեցին «ՍՕՍ Արմենի», «Ազնավուրը Հայաստանին» և նման տասնյակ այլ կազմակերպություններ, որոնք նյութական ու բարոյական մեծ աջակցություն էին ցույց տալիս Հայաստանին: Բազմաթիվ սփյուռքահայեր եկան հայրենիք՝ իրենց հետ բերելով սննդամթերք, հագուստ, դեղորայք, վրաններ, տրանսպորտի ու կապի միջոցներ և այլ անհրաժեշտ ապրանքներ: Նրանց թվում էր նաև աշխարհահռչակ երգահան ու դերասան Շառլ Ազնավուրը, որը հետագայում ևս մեծ եռանդով շարունակեց իր ազգանվեր գործունեությունը: Սփյուռքի ներկայացուցիչներից շատերը, որոնց թվում բժիշկներ, ճարտարապետներ, շինարարներ, հոգեբաններ, արվեստագետներ, մնացին Հայաստանում և անմիջականորեն մասնակցեցին փրկարարական ու վերականգնման աշխատանքներին:

Օրհասական վիճակում հայտնված իրենց հայրենակիցներին օգնության շտապեց նաև ազատատենչ արցախահայությունը: Չնայած մարզի ծանր կացությանը՝ Լեռնային Ղարաբաղից սննդամթերքով և այլ անհրաժեշտ ապրանքներով բեռնված ավտոշարասյուններ ուղևորվեցին ղեկի աղետի գոտի, նվիրաբերվեց շուրջ 4 մլն. 478 հազար ռուբլի դրամ<sup>5</sup>:

Ողջ աշխարհը, դրսևրելով զթասրտություն և մարդասիրություն, անշահախնդիր օգնություն էր ցույց տալիս ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդին: Մոլորակի գրեթե բոլոր անկյուններում հանգանակություններ էին հավաքվում և առաքվում Հայաստան: Պաշտոնական տվյալներով՝ 1990 թ. հունիսի 1-ի դրությամբ Հայաստանի օգնության հիմնադրամին արտասահմանյան երկրներից փոխանցվել էր շուրջ 35 մլն. տարադրամային ռուբլի<sup>6</sup>: Միաժամանակ շատ արտասահմանյան պետություն-

<sup>2</sup> Տե՛ս «Правда», 14 մայիս, 1989:

<sup>3</sup> Տե՛ս «Труд», 25 դեկտեմբեր, 1988:

<sup>4</sup> Տե՛ս «Коммунист», 5 մարտի, 1989:

<sup>5</sup> Տե՛ս Բազրատ Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 98:

<sup>6</sup> Տե՛ս «Коммунист», 28 հունիս, 1990:

ներ, կազմակերպություններ և ընկերություններ լայնորեն ընդգրկվեցին աղետի գոտու վերականգնման աշխատանքներում: Նրանք մվիրատվության կարգով կառուցեցին ժամանակակից բնակելի թաղամասեր, հիվանդանոցներ, դպրոցներ՝ իրենց բոլոր հարմարություններով և սարքավորումներով: Արդեն 1989 թ. իտալացի շինարարները Սպիտակում կառուցեցին մի ամբողջ բնակելի թաղամաս՝ Իտալական գյուղը: Նորվեգացիները կառուցեցին ժամանակակից հիվանդանոց, որը կրում է հայ ժողովրդի բարեկամ Ֆ. Նանսենի անունը: Գյումրիում շահագործման հանձնվեց անգլիացիների կառուցած դպրոցը, որի բացմանը մասնակցեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թետչերը: Գյումրիում ավտոբիացիները կառուցեցին 110 հարմարավետ տնակներ: Այդ թաղամասի բացման արարողությանը մասնակցելու համար այստեղ ժամանեց Ավստրիայի փոխկանցելը Յոզեֆ Ռիզլերը: Նման օրինակները շատ են:

Հայ ժողովուրդը երախտագիտությամբ ընդունեց աշխարհի մարդասիրական օգնությունը: Սակայն ստացվող մթերքների և ապրանքների մեծաքանակությունն ու գրեթե անդադրում ներհոսքը զգալի դժվարություններ էին առաջացնում դրանց վերահսկման, հաշվառման ու բաշխման աշխատանքներում, ինչի հետևանքով հաճախ այդ օգնությունը ընկնում էր անազնիվ ու շահամոլ անձանց ձեռքը՝ չհասնելով իսկական հասցեատերերին:

Արդեն 1989 թ. ակնհայտ էր, որ աղետի գոտին երկու տարում վերականգնելու ԽՍՀՄ կառավարության որոշումը դատապարտված էր ձախողման: Դրա գլխավոր պատճառներից մեկը՝ Լարաբարայան շարժման ծավալմամբ պայմանավորված, Ադրբեյջանի կողմից իրականացվող տնտեսական շրջափակումն էր, որի հետևանքով շինանյութեր, վառելիք և այլ անհրաժեշտ ապրանքներ չէին հասնում Հայաստան: Միաժամանակ, վերականգնման աշխատանքների կազմակերպման գործում գոյություն ունեին թերություններ: Բացակայում էր միասնական ղեկավարությունը, ֆինանսական և նյութական ռեսուրսները ցրված էին տարբեր հանրապետությունների մեծաթիվ շինմունտաժային կազմակերպությունների միջև և այլն: Արդյունքում, 1989-1990 թթ. ընթացքում աղետի գոտում իրականացվեց նախատեսված բնակելի շենքերի կառուցման միայն 14,8 %-ը և հանրակրթական դպրոցների՝ 5,5 %-ը: Գրեթե նույնքան կատարվեց նախադպրոցական հաստատությունների շահագործման պլանը: Ավելի անմխիթար էր հիվանդանոցների, պոլիկլինիկաների և մշակութային օջախների շինարարության վիճակը: Փաստորեն աղետի գոտու բնակչության մեծ մասը շարունակում էր անօթևան մնալ և զուրկ էր կենցաղային տարրական հարմարություններից, ինչը էլ ավելի էր սրում հանրապետությունում տիրող սոցիալական լարվածությունը: Վերջինս պայմանավորված էր նաև աշխատուժի արդյունավետ զբաղվածության ապահովման ոլորտում առկա հիմնախնդիրներով: 1990 թ. աշխատանքի տեղավորման կարիք ուներ 118 հազար մարդ, այդ թվում 44 հազար փախստական: Մինչդեռ հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում թափուր էր ավելի քան 18 հազար աշխատատեղ և համապատասխան աշխատուժով լիարժեքորեն համարված չլինելու հետևանքով, աղետի գոտու արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական կարողություններն օգտագործվում էին միայն 60-70 %-ով: Դրա հետ մեկտեղ, Հայաստանի տարբեր շրջանների հազարավոր բնակիչներ՝ հիմնականում որակյալ շինարարներ, շարունակում էին մեկնել արտագնա աշխատանքի: 1990թ. հանրապետությունից Միության տարբեր տարածաշրջաններ արտագնա աշխատանքի էր մեկնել շուրջ 10 հազար մարդ, այդ թվում 4 հազարը՝ աղետի գոտուց<sup>7</sup>: Մինչդեռ երկրաշարժի գոտում աշխատում էին միութենական հանրապետություններից ու արտասահմանից եկածները: Աղետի գոտու վերականգնման աշխատանքների բնականոն ընթացքի վրա բացասաբար էր անդրադառնում նաև հանրապետության ներքաղաքական լարված իրավիճակը: Համազգային շարժման ալիքի ներքո որոշ «ժայռենասերներ» երկրաշարժի գոտում աշխատող շինարարներին հարկադրում էին մասնակցելու քաղաքական նպատակներ հետապնդող գործադուլներին: Միաժամանակ, այդ նույն անձանց կողմից առաջ քաշվեց «մեր տունը պետք է ինքներս կառուցենք» կարգախոսը, որով ըստ էության կոչ էր արվում Հայաստանից վտարել միութենական հանրապետություններից

<sup>7</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 սպրիլի, 1991:

հայ ժողովրդին օգնության հասած շինարարներին և օժանդակ ծառայությունների աշխատակիցներին:

Այս ամենի հետևանքով շինարարական շատ կազմակերպություններ դադարեցրին իրենց աշխատանքներն ու հեռացան Հայաստանից, իսկ նրանց կողմից թողնված մեծաքանակ շինտեխնիկան աստիճանաբար «անհայտացավ»:

Այսպիսով, ավերիչ երկրաշարժի հետևանքով սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում ազգային ազատագրական ծանր պայքար մղող հայ ժողովուրդը հայտնվեց խիստ դժվարին կացության մեջ: Վերջինս էլ ավելի բարդացավ ԽՍՀՄ-ի փլուզման պատճառով, երբ աղետի գոտու վերականգնման ողջ ծանրությունն ըստ էության մնաց տնտեսական շրջափակման մեջ գտնվող նորանկախ Հայաստանի Հանրապետության ուտերին:

## СПИТАКСКОЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ И ПОМОЩЬ МИРОВОГО СООБЩЕСТВА (1988-1990 гг.)

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *Р. Азизбеян* \_\_\_\_\_

7 декабря 1988 года в Армении произошло разрушительное землетрясение силой более 9 баллов. Оно охватило 40 % территории республики, с населением 1 млн. 130 тыс. Сразу после землетрясения на помощь армянскому народу прибыли многочисленные спасатели, врачи, строители и более 40 тыс. других специалистов почти из всех союзных республик. Помогали более 113 государств и 7 международных организаций. В зоне землетрясения трудились около 2 тыс. зарубежных специалистов из разных концов мира. Огромную материальную и моральную помощь поспешила оказать и армянская диаспора.

Однако, уже в 1989 г. стало очевидно, что решение правительства СССР о восстановлении зоны бедствия в двухгодичный срок обречено на провал. Одной из главных причин явилась экономическая блокада Армении. Вместе с тем имелись недостатки и в деле организации восстановительных работ: отсутствовало единое руководство, финансовые и материальные ресурсы были разобщены между многочисленными строительно-монтажными организациями различных республик и т. п. На ход восстановительных работ негативно отражались социально-экономический кризис и напряженная внутриполитическая ситуация республики, связанная с Карабахским движением.